

քաղաքական մարդիկ (Paralela Istoria, 1914, էջ 74) :

Յիշենք, աւելի նոր դէմքերու մէջէն, Գրիգոր Թրանքու Եաչ, երկիցս աշխատանքի նախարար, Զօր. Զատիկ՝ հրամանատար Դ. զօրաբանակի, առանց թուելու անոնք որ եղած են Տերակուտական, երեսփոխան, դատաւոր, ուսուցչապետ, եւ այլն :

**ԹՐԱՆՍԻԼՎԱՆԻՈՅ ՄԷՁ**

Թերի պիտի ըլլար մեր այս գլուխը՝ եթէ պահ մըն ալ ակնարկ մը չնետէինք Թրանսիլվանիոյ կողմը : Տեսնելու համար թէ քաղաքական ինչ իրաւունքներ ունէին անոնք Մաճառներու իշխանութեան տակ : Ան պիտի լուսարանէ մեր իսկ նիւթը :

Հայոց խմբական հոծ գաղթը Ռումանիայէն դէպի Թրանսիլվանիա, ինչպէս տեսնք, Մոլտովայի Կէօրկէ Տուքա իշխանին օրով է, որ իր առաջին իշխանութեան օրով իսկ (1668-1672), հալածանքի ենթարկեց հայերը՝ անոնցմէ ոմանք մասնակցած ըլլալով իր դէմ դաւադրութեան մը : Հարիւր տարուան մէջ երրորդ հալածանքն էր աս, ինչպէս յիշեցինք աւելի վերը : Այս անգամ հայերը, չկարենալով ալլելու տոկալ, Մուչուվայի Մինաս եպիսկոպոսին առաջնորդութեամբ, գաղթեցին Թրանսիլվանիոյ կողմը :

Ո՛վ ներս չէր առնէր այսպիսի շինարար տարր մը :

Այդ գաղթը տեղի կ'ունենար 1672-ին, Միքայէլ Արաֆի մաճառ իշխանին օրով, որ սիրալիք ընդունեց հայերը իր հողերուն վրայ : Ութը տարի յետոյ, 1680 Հոկտ. 26-ին, Միքայէլ Արաֆի հետեւեալ հրովարտակը կ'ուզէր իր ժողովուրդին, Ալպա-Յուլիայի զոհակէն .

«Միքայէլ Արաֆի շնորհօքն Աստուծոյ իշխան Դրանսիլվանիոյ. տէր հունգարական մասին, եւ այլն : Մեր յարգելի ստորադասներուն խնդրանքը լսելով, թէ Դուրտա դաւառին Քէ-դէլէ անուն գեղին մէջ բնակութիւն հաստատող հայ վաճառականներուն թոյլ տրուի, որ մեր պետութեան մէջ ամէն տեղ, ամէն քաղաք ու տօնավաճառ՝ իրենց արուեստին համեմատ յարգարուած կաշիղէն ծախեն, եւ ուրիշ տեսակ ապրանքներով եւ արջաուով վաճառակա-

նութիւն կարենան ընել... Ուստի գթածարար եւ ծանրապէս կը հրամայենք մեր ամէն կարգի հպատակներուն, որպէսզի վերոյիշեալ հայոց նկատմամբ մեր ցոյց տուած գթութիւնը լաւ ըմբռնելով՝ թոյլ տան անոնց որ ամէն տեղ մեր պետութեան մէջ ազատապէս առեւտուր ընեն, եւ այս բանին մէջ չյանդգնին ոչ իրենց անձը եւ ոչ ստացուածքը վրդովել կամ վնասի ենթարկել» :

Հայերը հետզհետէ կը հաստատուին Թրանսիլվանիոյ զոնազան կողմը, մասնաւորաբար ձուրձով, Զիք-Սիլվիզ, Պիտրից քաղաքներուն մէջ, ինչպէս նաեւ Ֆիլֆալու, Կէօրկին, Բէդէլէ, Պադօշ, Վիցէ, եւ հուսկ ուրեմն կը կեդրոնանան Եղիսարէթուպոլիս (1689) ու Կեռլա (1700) :

Հին քրոնիկագիրները կը յիշեն թէ հայոց գտած հիւրասիրութիւնը, մանաւանդ վաճառականութեան մէջ անոնց ցոյց տուած յառաջդիմութիւնը հաշտ աչքով չբիտուեցան տեղական ուրիշ տարբերու, ինչպէս Սաքսոններու եւ Սըգոյներու կողմէ, որոնք ուրիշ նախանձորդներու հետ ամէն բան ըրին ձախողեցնելու համար հայոց զարգացումը, մանաւանդ յաջողելով մէկուկէս դար յապաղեցնել հայոց քաղաքացիական իրաւունքներու տէր դառնալը :

Հետեւաբար հայոց վայելած իրաւունքները սահմանափակուեցան առեւտրական ազատութիւններու եւ տեղական ինքնավարութեան մէջ, ինչ որ մեծագոյն սատարն եղաւ, որպէսզի ամբողջ մէկուկէս դար հեռանայ ձուլման վտանգը, որ սակայն պիտի չուշանար՝ երբ հայերը ձեռք ձգէին քաղաքացիական ազատութիւններ ալ :

Հայոց դիւրութիւն շնորհող երկրորդ հրովարտակը դարձեալ Արաֆի իշխանինն է, տրուած 1689 Սեպտ. 1-ին, պաշտպանելով (Եղիսարէթուպոլիս) համախմբուող հայերուն, որոնք տուրքերու եւ պարտքերու պատրուակին տակ սկսեցին կեդեքուիլ : Հրովարտակը կը հրամայէ . «Պարտատէրերէն ոչ ոք համարձակի այսուհետեւ հայ մը՝ բացի անկէ որ բուն պարտականն է՝ բանտարկելու կամ բանտարկել տալու . ամենեւին չյանդգնի մէկը հայերը անհանդիստ ընելու եւ անոնց անձին վնաս հասցնելու : Ամէն պարտատէր իր յատուկ